ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 12/2024 Ա/Վ

ՎԱՐՈՒՅԹԻ ՀԱՐՈՒՑՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ԵՎ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 13 սեպտեմբերի 2024թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մ. Գալստյանի (նիստը նախագահող), Ա. Փաշինյանի, Լ. Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2024 թվականի սեպտեմբերի 13-ին, ուսումնասիրելով ՀՀ քաղաքացի Էդգար Ղազարյանի դիմումը, **պարզեց**.

I. Դիմումի բովանդակությունը և պահանջը

1.1. 2024 թվականի օգոստոսի 29-ին էլեկտրոնային հարցումների միասնական հարթակի միջոցով Հանձնաժողովում ստացվել է ՀՀ քաղաքացի Էդգար Ղազարյանի հ.1237745 դիմումը:

1.2. Դիմումում նշվում է, որ Հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանը, ով այդ պաշտոնում ընտրվել է ՀՀ Ազգային ժողովի 2022 թվականի մարտի 3-ի՝ «Վահագն Խաչատուրյանին Հանրապետության նախագահ ընտրելու մասին» թիվ ԱԺՈ-27-Ա որոշմամբ, ՀՀ վարչապետի 2021 թվականի փետրվարի 2-ի՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության

վարչապետի 2015 թվականի դեկտեմբերի 22-ի N 1248-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 63-Ա որոշմամբ ընդգրկվել է ՀՊՏՀ կառավարման խորհրդի կազմում՝ որպես հիմնադրի անունից առաջադրված խորհրդի անդամ:

1.3. 2021 թվականի փետրվարի 4-ին ՀՊՏՀ կառավարման խորհրդի թիվ 1-1 որոշմամբ Վահագն Խաչատուրյանն ընտրվել է ՀՊՏՀ կառավարման խորհրդի նախագահի պաշտոնում, իսկ 2022 թվականի հունվարի 10-ին ՀՊՏՀ կառավարման խորհրդի 3-1 որոշմամբ նա վերընտրվել է նույն պաշտոնում:

1.4. Համաձայն դիմումի՝ Վահագն Խաչատուրյանը Հանրապետության նախագահի պաշտոնում ընտրվելուց հետո հրաժարական չի ներկայացրել ՀՊՏՀ կառավարման խորհրդի նախագահի պաշտոնից:

1.5. Դիմումատուն, վկայակոչելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 124-րդ հոդվածի 4-րդ մասը, նշել է, որ Հանրապետության նախագահը չի կարող զբաղեցնել որևէ այլ պաշտոն, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք: Միաժամանակ, վկայակոչելով ՀՀ Սահմանադրության 149-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերով սահմանված դրույթները, նշել է, որ Հանրապետության նախագահը նորընտիր Ազգային ժողովի լիազորությունների ժամկետն սկսվելուց հետո անհապաղ վարչապետ է նշանակում Սահմանադրության 89-րդ հոդվածով սահմանված կարգով ձևավորված խորհրդարանական մեծամասնության ներկայացրած թեկնածուին, ինչպես նաև Հանրապետության նախագահն անհապաղ վարչապետ է նշանակում Ազգային ժողովի կողմից ընտրված թեկնածուին: Սա նշանակում է, որ Հանրապետության նախագահը չի կարող զբաղեցնել պաշտոն այն պաշտոնատար անձի որոշմամբ, ում ինքն է Սահմանադրությամբ սահմանված կարգով նշանակում տվյալ պաշտոնում: Այսպիսով, դիմումատուն նշել է, որ ստեղծված իրավիճակում առկա է անհամատեղելիության և շահերի բախման խնդիր:

1.6. Բացի դրանից, դիմումատուն նշել է, որ չնայած այն հանգամանքին, որ Հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանը 2021 թվականի փետրվարի 4-ից մինչ օրս զբաղեցնում է «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի նախագահի պաշտոնը, սակայն

այդ մասին որևէ տեղեկատվություն չի նշել Հանձնաժողով ներկայացրած իր 2021, 2022 և 2023 թվականների գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագրերում:

1.7. Հաշվի առնելով դիմումում նշված վերոնշյալ փաստական տվյալները՝ դիմումատուն խնդրել է Հանձնաժողովին իր իրավասությունների շրջանակներում միջոցներ ձեռնարկել Վահագն Խաչատուրյանի կողմից պաշտոնի անհամատեղելիության պահանջների կատարման ապահովման, ինչպես նաև հայտարարագրերում հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելու հետ կապված պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:

II. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը

2.1. Անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ վարույթի հարուցմանն առնչվող իրավակարգավորումներ՝

2.1.1. ՀՀ Սահմանադրության 124-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն.

«Հանրապետության նախագահը չի կարող զբաղեցնել որևէ այլ պաշտոն, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք:»:

2.1.2. Սահմանադրության 141-րդ հոդվածի համաձայն.

«1. Հանրապետության նախագահը կարող է պաշտոնանկ արվել պետական դավաճանության, այլ ծանր հանցագործության կամ Սահմանադրության կոպիտ խախտման համար:

2. Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին եզրակացություն ստանալու համար Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ դիմում է Սահմանադրական դատարան:

3. Ազգային ժողովը Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու մասին որոշում է կայացնում Սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով:»:

2.1.3. «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 151-րդ հոդվածի համաձայն.

«1. Հանրապետության նախագահը կարող է պաշտոնանկ արվել պետական դավաճանության, այլ ծանր հանցագործության կամ Սահմանադրության կոպիտ խախտման համար:

2. Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ ներկայացնելու իրավունք ունի խմբակցությունը:

(...)

3. (...) Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին եզրակացություն ստանալու համար, Ազգային ժողովը, պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ, դիմում է Սահմանադրական դատարան, և հարցի քննարկումն ընդմիջվում է մինչև Սահմանադրական դատարանի եզրակացության ստանալը: Եթե Սահմանադրական դատարան դիմելու մասին Ազգային ժողովի որոշումը չի ընդունվում, ապա նախագիծը հանվում է շրջանառությունից: (...)»:

2.1.4. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 80-րդ հոդվածի համաձայն.

«1. Սույն հոդվածում նշված գործերով Սահմանադրական դատարան կարող է դիմել Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ՝ Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի մասին Ազգային ժողովին հայտնի դառնալուց հետո՝ ոչ ուշ, քան եռամսյա ժամկետում:

2. Ազգային ժողովն իր որոշման մեջ պետք է մատնանշի Հանրապետության նախագահի այն իրավական ակտը, գործողությունը կամ անգործությունը, որում առկա են պետական դավաճանության կամ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված այլ առանձնապես ծանր կամ ծանր հանցագործության կամ Սահմանադրության կոպիտ խախտման հատկանիշներ:

(...)

7. Սույն հոդվածում նշված գործերով ապացուցման բեռը կրում է դիմող կողմը:

(...)

9. Գործը դատաքննության նախապատրաստելիս Սահմանադրական դատարանը կարող է ձևավորել աշխատանքային խումբ իր տված հանձնարարականների հիման վրա

գործի առանձին հանգամանքներ պարզելու նպատակով, ինչպես նաև իրավասու մարմիններին կարող է հանձնարարականներ տալ տվյալ գործին առնչվող որոշակի հանգամանքներ պարզելու համար:

10. Սույն հոդվածում նշված գործերի քննության ընթացքում Սահմանադրական դատարանը կամ աշխատանքային խումբն իրավասու է՝

1) դատական, դատախազական, քննչական մարմիններից, պետական այլ մարմիններից, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններից պահանջելու իրենց տրամադրության տակ գտնվող նյութեր, քաղաքացիական, վարչական գործեր, քրեական վարույթի նյութեր, դատավճիռներ, վճիռներ, որոշումներ, տեղեկանքներ և այլ նյութեր.

2) պատվիրելու փորձաքննություններ և ստանալու եզրակացությունները.

3) հրավիրելու և լսելու այն անձանց, որոնց բացատրությունները կարող են նշանակություն ունենալ գործով կայացվելիք եզրակացության համար:

11. Դատական նիստը բացվելուց հետո Ազգային ժողովի ներկայացուցիչը ներկայացնում է դիմող կողմի դիրքորոշումը, որից հետո ներկայացված փաստերի առնչությամբ իր դիրքորոշումն է հայտնում Հանրապետության նախագահը կամ նրա ներկայացուցիչը: Դրանից հետո կատարվում է ապացույցների հետազոտում: Նիստի վերջում եզրափակիչ խոսքով հանդես են գալիս դիմող կողմը, որը կարող է պնդել իր դիմումը կամ հրաժարվել դրանից, և Հանրապետության նախագահը կամ նրա ներկայացուցիչը, որին տրամադրվում է պաշտպանությամբ հանդես գալու հնարավորություն: Հանրապետության նախագահը կամ նրա ներկայացուցիչն ունի վերջին ելույթի իրավունք: Վերջին ելույթից հետո Սահմանադրական դատարանը կարող է սույն օրենքով նախատեսված կարգով աշխատակարգային որոշում ընդունել գործի վարույթը վերսկսելու վերաբերյալ, իսկ այդպիսի որոշում չընդունվելու դեպքում նիստը նախագահողը հայտարարում է գործի քննության ավարտի մասին:

(...)

14. Սույն հոդվածում նշված գործերով Սահմանադրական դատարանը կարող է ընդունել հետևյալ եզրակացություններից մեկը.

1) Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի բացակայության մասին.

2) Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին:

(...)

16. Սույն հոդվածի 14-րդ մասի 2-րդ կետով նախատեսված եզրակացությունում Սահմանադրական դատարանը պետք է նշի՝

1) Հանրապետության նախագահի այն իրավական ակտերը, գործողությունները կամ անգործությունը, որոնցում առկա են պետական դավաճանության կամ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված այլ առանձնապես ծանր կամ ծանր հանցագործության հատկանիշներ և այդ հանցագործության որակումը կամ այն իրավական ակտերը, գործողությունները կամ անգործությունը, որոնցում առկա են Սահմանադրության կոպիտ խախտման հատկանիշներ.

2) սույն մասի 1-ին կետում նշված արարքներում Հանրապետության նախագահի մեղավորությունը հաստատող ապացույցները և դատարանի պատճառաբանված դիրքորոշումը դրանց գնահատման վերաբերյալ: (...)»:

2.1.5. «Հանրային ծառայության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն.

«Պետական քաղաքական պաշտոններն են Հանրապետության նախագահի (...) պաշտոնները, (...):»:

2.1.6. Նույն օրենքի 31-րդ հոդվածի համաձայն.

«1. Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները չեն կարող զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից:

2. Հայաստանի Հանրապետության նախագահը չի կարող զբաղեցնել որևէ այլ պաշտոն, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք:

(...)

17. Հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի կողմից սույն հոդվածով նախատեսված անհամատեղելիության պահանջները խախտելը նրա լիազորությունների դադարեցման կամ նրան զբաղեցրած պաշտոնից ազատելու հիմք է: *(...)»:*

2.1.7. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

«1. Հանձնաժողովը՝

1) քննում և լուծում է պետական պաշտոն զբաղեցնող անձանց, (...) կողմից «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, (...) խախտումների և շահերի բախման դեպքերի վերաբերյալ դիմումներ.

2) իրավասու մարմնին կամ պաշտոնատար անձին ներկայացնում է անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների, ինչպես նաև շահերի բախման իրավիճակների կանխարգելմանն ու վերացմանն ուղղված առաջարկություններ (այդ թվում՝ պաշտոն զբաղեցնող անձին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ). (...)»:

2.1.8. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 27-րդ հոդվածի համաձայն.

«1. Վարույթ կարող է հարուցվել՝

1) *յուրաքանչյուր անձի (անձանց) գրավոր դիմումի հիման վրա.*

2) լրատվամիջոցների հրապարակումների հիման վրա.

3) Հանձնաժողովի նախաձեռնությամբ՝ հայտարարագրերը վերլուծելիս կամ օրենքով նախատեսված վարույթ իրականացնելիս առերևույթ խախտումներ կամ դեպքեր հայտնաբերելու դեպքում: (...)»

2. Հանձնաժողովը պետական պաշտոն զբաղեցնող անձանց, համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների առերևույթ խախտումների, ինչպես նաև պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից վարքագծի կանոնների առերևույթ խախտումների, բացառությամբ նվերներ ընդունելու սահմանափակումներին առնչվող խախտումների, կամ շահերի բախման առերևույթ դեպքերի առկայության պարագայում հարուցում է համապատասխան վարույթ: (...)»:

2.1.9. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն.

«Հանձնաժողովը մերժում է վարույթի հարուցումը, եթե՝(...)

2) դիմումում բարձրացված հարցերը դուրս են Հանձնաժողովի իրավասությունից.

(...)»:

2.1.10. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 33-րդ հոդվածի համաձայն.

«(...)

2. Վարույթի արդյունքում Հանձնաժողովն ընդունում է եզրակացություն պաշտոն զբաղեցնող անձի կողմից անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների խախտման առկայության կամ բացակայության մասին կամ համապատասխան պաշտոն զբաղեցնող անձի կողմից վարքագծի կանոնների խախտման առկայության կամ բացակայության մասին, իսկ իրավիճակային շահերի բախման դեպքի կապակցությամբ՝ շահերի բախման իրավիճակի առկայության կամ բացակայության մասին: (...)

4. Պաշտոն զբաղեցնող անձի կողմից անհամատեղելիության պահանջների խախտման մասին եզրակացությունը և այդ առնչությամբ վարույթի բոլոր փաստաթղթերը, նյութերը եզրակացությունն ընդունելու պահից եռօրյա ժամկետում ուղարկվում են պաշտոն զբաղեցնող անձի կողմից անհամատեղելիության պահանջների խախտման հիմքով նրա լիազորությունները դադարեցնելու հարցը քննարկելու (քննելու) իրավասություն ունեցող մարմիններ: (...)»:

2.1.11. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 34-րդ հոդվածի համաձայն.

«1. Հանձնաժողովի եզրակացությունները (այդ թվում՝ վերանայման վարույթի արդյունքում ընդունված) կարող են բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դրանք փաստի հիմքով վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթի շրջանակում:

2. Վարչական դատարանի՝ Հանձնաժողովի հաստատած փաստերը փոփոխելու և նոր փաստեր հաստատելու մասին որոշման հիման վրա Հանձնաժողովի կողմից իր եզրակացության վերանայման արդյունքում ընդունված եզրակացությունը ենթակա չէ բողոքարկման:

3. Պատգամավորների, դատավորների, Բարձրագույն դատական խորհրդի ոչ դատավոր անդամների կողմից անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների խախտումների մասին Հանձնաժողովի եզրակացությունները ենթակա չեն բողոքարկման սույն հոդվածի 1-ին և 4-րդ մասերով սահմանված կարգով:

4. Հանձնաժողովի եզրակացությունները շահագրգիռ անձը (անձինք) կարող է (են) բողոքարկել նաև ընթացակարգային կանոնների խախտման հիմքով՝ դատական կարգով, եթե դրանք էապես սահմանափակել են նրա (նրանց) իրավունքներն ու իրավաչափ շահերը:»:

2.2. Հայտարարագրման պահանջների առերևույթ խախտմանն առնչվող իրավակարգավորումներ՝

2.2.1. «Հանրային ծառայության մասին» օրենքի 34-րդ հոդվածի համաձայն.

«1. Սույն օրենքի իմաստով՝ հայտարարատու պաշտոնատար անձինք են պետական պաշտոն զբաղեցնող անձինք, (...):

(...)

2. Պետական պաշտոն զբաղեցնող անձինք (բացառությամբ պետական հայեցողական պաշտոն զբաղեցնող անձանց), (...) սույն օրենքով նախատեսված կարգով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով են ներկայացնում գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագիր: (...)»:

2.2.2. Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն.

«Հայտարարատուի կողմից հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:»:

2.2.3. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

«Հանձնաժողովի գործառույթներն են՝

(...)

2) հայտարարագրման գործընթացը կանոնակարգելը, հայտարարագրերն ստուգելն ու վերլուծելը. (...):»:

2.2.4. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

«Հանձնաժողովն իրականացնում է՝

(...)

5) հայտարարագրերի վերլուծության համար նշանակություն ունեցող հանգամանքներ պարունակող լրատվամիջոցների հրապարակումների կամ անձանց գրավոր դիմումների հիման վրա հայտարարագրերի վերլուծություն:»:

III. Հանձնաժողովի պատճառաբանությունները ու եզրահանգումը

Ուսումնասիրելով դիմումը և դրանից բխող պահանջներին վերաբերելի օրենսդրությունը՝ Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը.

Հանրապետության նախագահի կողմից անհամատեղելիության պահանջների ենթադրյալ խախտման հարցի քննարկումը պետք է դիտարկվի՝ հաշվի առնելով Հանրապետության նախագահի սահմանադրական հատուկ կարգավիճակը և դրանով պայմանավորված՝ նրա պաշտոնանկության և նրան պատասխանատվության ենթարկելու իրավահարաբերությունների հետ կապված սահմանադրական երաշխիքները:

Այսպես, Սահմանադրության 123-րդ հոդվածի համաձայն՝ Հանրապետության նախագահը պետության գլուխն է և հետևում է Սահմանադրության պահպանմանը:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգով ընդգծվել է Հանրապետության նախագահի հատուկ դերակատարությունն ու նշանակությունը: Մասնավորապես, նշվել է, որ Հանրապետության նախագահի հիմնական առաքելությունը պետք է լինի Սահմանադրության պահպանմանը հետևելը, հակակշռող և զսպող լիազորությունների արդյունավետ գործադրումը: Հայեցակարգով նաև նշվել է, որ Հանրապետության նախագահը նոր (2015թ. փոփոխություններով սահմանված) լիազորություններով կլինի վերկուսակցական անաչառ արբիտր, որը կստանձնի հաշտարարի ու միջնորդի դեր՝ ունենալով երկրի զարգացման դինամիկ հավասարակշռությունն ապահովելու կարևոր առաքելություն:

Ընդ որում, հայեցակարգով ընդգծվել է նաև քաղաքական ուժերից Հանրապետության նախագահի լիակատար անկախության ապահովման կարևորությունը:

Ըստ այդմ, կարող ենք արձանագրել, որ որպես պետության գլուխ և Սահմանադրության պահպանմանը հետևելու առաքելությամբ օժտված պաշտոնատար անձ՝ Հանրապետության նախագահն առանձնահատուկ դերակատարություն ունի սահմանադրական կարգի պահպանման, սահմանադրական մարմինների միջև փոխհարաբերությունների հավասարակշռման հարցում: Ընդ որում, որպես վերկուսակցական անկախ պաշտոնատար անձ՝ Հանրապետության նախագահը պետք է

օժտված լինի հանրային իշխանության այլ մարմիններից բավարար անկախությամբ, ինչը թույլ կտա նրան անկաշկանդ կերպով իրականացնել իր լիազորությունները՝ առաջնորդվելով բացառապես ՀՀ Սահմանադրությամբ:

Վերոնշյալը հաստատվել է նաև Սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի սեպտեմբերի 4-ի թիվ ՍԴՈ-1476 որոշմամբ, որով արձանագրվել է, որ Հանրապետության նախագահը կարևորագույն սահմանադրական գործառույթներ իրականացնող պաշտոնատար անձ է, որին Սահմանադրությունն օժտել է անձեռնմխելիությամբ՝ նրա բնականոն և արդյունավետ գործունեությունը երաշխավորելու, նրա լիազորություններին ոչ իրավաչափ միջամտություններից և անհիմն հետապնդումներից պաշտպանելու նպատակով:

Նմանապես, Սահմանադրությամբ նախատեսվել են Հանրապետության նախագահի պաշտոնանկության հիմքերը և բարդեցված ընթացակարգ՝ միաժամանակ օրենսդիր և դատական իշխանության մարմինների ներգրավմամբ՝ նպատակ ունենալով երաշխավորելու Հանրապետության նախագահի՝ որպես Սահմանադրության պահպանման առաքելությամբ օժտված պաշտոնատար անձի, անխոչընդոտ և անկաշկանդ գործունեությունը:

Մասնավորապես, Սահմանադրության 141-րդ հոդվածի համաձայն՝ Հանրապետության նախագահը կարող է պաշտոնանկ արվել պետական դավաճանության, այլ ծանր հանցագործության կամ Սահմանադրության կոպիտ խախտման համար: Նույն հոդվածով նախատեսվում է, որ պաշտոնանկ անելու **հիմքերի առկայության մասին եզրակացություն** ստանալու համար Ազգային ժողովը դիմում է Սահմանադրական դատարան:

«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 151-րդ հոդվածով ամրագրվել են այս ընթացակարգի մանրամասները և սահմանվել է, որ Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ ներկայացնելու իրավունք ունի խմբակցությունը: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եթե Սահմանադրական դատարանի եզրակացությամբ Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու հիմքերը բացակայում են, ապա **այն փաստերը, որոնք հերքվել են Սահմանադրական դատարանի որոշմամբ**, Հանրապետության

Նախագահին պաշտոնանկ անելու մասին Ազգային ժողովի նախագծի հիմքում չեն կարող դրվել:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 80-րդ հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովը Սահմանադրական դատարան դիմելու մասին իր որոշման մեջ պետք է մատնանշի Հանրապետության նախագահի այն իրավական ակտը, գործողությունը կամ անգործությունը, որում առկա են պետական դավաճանության կամ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված այլ առանձնապես ծանր կամ ծանր հանցագործության կամ Սահմանադրության կոպիտ խախտման հատկանիշներ: Նույն հոդվածի համաձայն՝ որոշմանը պետք է նաև կցվեն Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու հիմքերը հավաստող ապացույցներ, իսկ ապացուցման բեռը կրում է դիմող կողմը:

Ընդ որում, **Սահմանադրական դատարանն իրավասու է իրականացնել դեպքի հանգամանքների պարզմանն ուղղված գործողություններ՝** ձևավորել աշխատանքային խմբեր, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից պահանջելու տեղեկատվություն, պատվիրելու փորձաքննություններ, հրավիրելու և լսելու անձանց:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 80-րդ հոդվածով նաև նախատեսվում է Սահմանադրական դատարանի՝ ապացույցների հետազոտում իրականացնելու լիազորությունը: Գործի քննության արդյունքում Սահմանադրական դատարանը կայացնում է Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության կամ բացակայության մասին որոշում: Ընդ որում, եզրակացությունում պետք է նշվեն՝

1) Հանրապետության նախագահի այն իրավական ակտերը, գործողությունները կամ անգործությունը, որոնցում առկա են պետական դավաճանության կամ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված այլ առանձնապես ծանր կամ ծանր հանցագործության հատկանիշներ և այդ հանցագործության որակումը կամ այն իրավական ակտերը, գործողությունները կամ անգործությունը, որոնցում առկա են Սահմանադրության կոպիտ խախտման հատկանիշներ.

2) սույն մասի 1-ին կետում նշված արարքներում **Հանրապետության նախագահի մեղավորությունը հաստատող ապացույցները** և դատարանի պատճառաբանված դիրքորոշումը դրանց գնահատման վերաբերյալ:

Վերոնշյալ իրավակարգավորումների վերլուծության հիման վրա Հանձնաժողովն արձանագրում է, որ **Հանրապետության նախագահի պաշտոնանկության հիմքերի առկայությունը քննարկելու և հաստատելու իրավասությամբ օժտված է բացառապես Սահմանադրական դատարանը:**

Ընդ որում, **Սահմանադրական դատարանը** ոչ թե պարզապես գնահատում է, թե արդյոք Հանրապետության նախագահի՝ խնդրո առարկա արարքը հանդիսանում է պետական դավաճանություն, ծանր հանցագործություն կամ Սահմանադրության կոպիտ խախտում, այլ **իրականացնում է գործի հանգամանքների ամբողջական քննություն և ապացույցների հետազոտում, ինչի հիման վրա նաև հավաստում է որոշակի փաստերի առկայությունը կամ բացակայությունը:** Այլ խոսքերով, Սահմանադրական դատարանն իրականացնում է ոչ միայն արարքի որակում՝ տեսական մակարդակում, այլ նաև հավաքում, ստուգում և գնահատում է ապացույցներ, որոնց հիման վրա հաստատում կամ ժխտում է Հանրապետության նախագահի կողմից որոշակի գործողության կամ անգործության կատարումը՝ փաստական մակարդակում:

Անդրադառնալով անհամատեղելիության պահանջների ենթադրյալ խախտման հարցի քննարկմանը՝ հարկ է նախ նկատել, որ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածով սահմանվում է Հանձնաժողովի լիազորությունը՝ քննելու պետական պաշտոն զբաղեցնող անձանց կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների խախտման վերաբերյալ դիմումներ:

Օրենքով չեն նախատեսվում նշված կանոնից որևէ բացառություններ՝ կապված որոշակի պետական պաշտոն զբաղեցնող անձանց հետ, այսինքն, չեն նախատեսվում այն պետական պաշտոնները, որոնց պարագայում Հանձնաժողովն իրավասու չէ հարուցելու անհամատեղելիության պահանջների խախտման վերաբերյալ վարույթ:

«Հանրային ծառայության մասին» օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ Հանրապետության նախագահի պաշտոնը պետական քաղաքական պաշտոն է:

Նույն օրենքի 31-րդ հոդվածի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի կողմից նշված հոդվածով նախատեսված անհամատեղելիության պահանջները խախտելը նրա լիազորությունների դադարեցման կամ նրան զբաղեցրած պաշտոնից ազատելու հիմք է: Ըստ այդմ, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 33-րդ հոդվածով սահմանվում է, որ անհամատեղելիության պահանջների խախտման վարույթի արդյունքում խախտման առկայության վերաբերյալ եզրակացություն ընդունելու պարագայում Հանձնաժողովը եզրակացությունն ուղարկում է այն մարմնին, որն իրավասու է քննել պաշտոն զբաղեցնող անձի լիազորությունների դադարեցման հարցը՝ անհամատեղելիության պահանջների խախտման հիմքով:

Միաժամանակ, ի տարբերություն այլ պետական պաշտոն զբաղեցնող անձանց, Հանրապետության նախագահի պարագայում անհամատեղելիության պահանջի խախտումն ինքնին լիազորությունների դադարեցման հիմք չէ: Ինչպես արդեն նշվեց, Հանրապետության նախագահը կարող է պաշտոնանկ արվել միայն պետական դավաճանության, այլ ծանր հանցագործության կամ Սահմանադրության կոպիտ խախտման համար՝ Ազգային ժողովի կողմից՝ Սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա:

Այսպիսով, անհամատեղելիության պահանջների խախտման պարագայում Հանրապետության նախագահի լիազորությունները կարող են դադարեցվել այն դեպքում, եթե Սահմանադրական դատարանի եզրակացությամբ արձանագրվել է, որ այդ խախտումը կազմել է «Սահմանադրության կոպիտ խախտում»:

Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու ինստիտուտը չի նույնանում անհամատեղելիության պահանջների խախտումը քննարկելու կառուցակարգերի հետ, քանի որ անհամատեղելիության պահանջի խախտումը Հանրապետության նախագահի պարագայում ինքնին պաշտոնանկ անելու հիմք չէ և կարող է այդպիսին դառնալ այն դեպքում, երբ կարձանագրվի, որ նման խախտումը հանդիսանում է Սահմանադրության կոպիտ խախտում: Միաժամանակ, Հանձնաժողովն արձանագրում է, որ անհամատեղելիության պահանջների խախտման վարույթների իրականացումը չի կարող ինքնանպատակ համարվել և անմիջականորեն փոխկապակցված է դրա հնարավոր

հետևանքների, այն է՝ պաշտոնատար անձի լիազորությունների դադարեցման հարցի քննարկման հետ: Ըստ այդմ, Հանձնաժողովի կողմից այս առնչությամբ վարույթի իրականացման լիազորությունը մշտապես փոխկապակցված է պաշտոնատար անձի լիազորությունների դադարեցման հարցը քննելու իրավասություն ունեցող մարմնին համապատասխան եզրակացություն ներկայացնելու լիազորության հետ: Հակառակ պարագայում վարույթի իրականացումն առարկայազուրկ կլինի:

Վերոգրյալի հիման վրա Հանձնաժողովն արձանագրում է, որ Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին Սահմանադրական դատարանի կողմից եզրակացություն տալու վերաբերյալ գործերի քննությունը և Հանձնաժողովի կողմից անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ վարույթը ծառայում են նույն նպատակին, այն է՝ պաշտոնատար անձի լիազորությունների դադարեցման հիմքերի առկայության ստուգմանը:

Այս համատեքստում կարևոր է ընդգծել, որ «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքի կարգավորումներից բխում է, որ Հանձնաժողովի՝ անհամատեղելիության պահանջների խախտման առկայության մասին եզրակացությունը վարչական ակտ է, որը ենթակա է բողոքարկման վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով:

ՀՀ վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված օրինականության հիմնարար սկզբունքը, իր բազմաթիվ որոշումներում ձևավորել է իրավական դիրքորոշում վարչական ակտի իրավաչափության կանխավարկածի մասին՝ նշելով, որ բոլոր դեպքերում վարչական ակտը համարվում է իրավաչափ, եթե այն օրենքով սահմանված կարգով ոչ իրավաչափ չի ճանաչվել: Հետևաբար՝ քննվող գործի շրջանակներում որևէ վարչական ակտի իրավաչափության վիճարկման պահանջի բացակայության պայմաններում դատարանն իրավասու չէ անդրադառնալ այդ հարցին, գնահատական տալ չվիճարկվող վարչական ակտի իրավաչափությանը, ինչպես նաև դրա՝ իրավական հետևանքներ առաջացնելու հնարավորությանը: Այլ կերպ՝ դատարանը պարտավոր է ձեռնպահ մնալ քննվող գործի շրջանակներում չվիճարկվող վարչական ակտի իրավաչափության կամ դրա՝ իրավական հետևանքներ առաջացնելու հնարավորության վերաբերյալ գնահատականներ տալուց (տե՛ս, օրինակ, Երևանի

քաղաքապետարանն ընդդեմ Հրաչյա Քարամյանի թիվ ՎԴ/2068/05/08 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.05.2009 թվականի որոշումը):

Սահմանադրական դատարանը ևս 2015 թվականի դեկտեմբերի 1-ի թիվ ՍԴՈ-1238 որոշմամբ փաստել է, որ առկա է չբողոքարկված ցանկացած իրավական ակտի, այդ թվում՝ անհատական վարչական ակտի իրավաչափության կանխավարկած, ինչը բացառում է չբողոքարկված ցանկացած իրավական ակտի իրավաչափությունը մեկ այլ գործի քննության ընթացքում գնահատելու հնարավորությունը՝ ելնելով վարչական ակտի իրավաչափության կանխավարկածի սկզբունքից:

Այսպիսով, անհամատեղելիության պահանջների խախտման առկայության վերաբերյալ Հանձնաժողովի եզրակացությունը վարչական ակտ է, որը անբողոքարկելի դառնալու պահից օժտված է իրավաչափության կանխավարկածով:

Ըստ այդմ, այն դեպքում, երբ Հանձնաժողովը կքննարկի Հանրապետության նախագահի կողմից անհամատեղելիության պահանջների ենթադրյալ խախտման փաստը և այս առնչությամբ կկայացնի եզրակացություն, այն օժտված կլինի իրավաչափության կանխավարկածով, ինչը կսահմանափակի Սահմանադրական դատարանին Հանրապետության նախագահի պաշտոնանկության հիմքերի ստուգման քննության ընթացքում: Այսպես, Սահմանադրական դատարանը, հանդիսանալով Հանրապետության նախագահի պաշտոնանկության հիմքերի ստուգման իրավասու միակ մարմինը, ստիպված կլինի հաստատված համարել Հանրապետության նախագահի կողմից անհամատեղելիության պահանջների խախտման փաստը՝ Հանձնաժողովի եզրակացության հիման վրա և չի կարողանա իրականացնել ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ուսումնասիրություն:

Հանձնաժողովն, այդպիսով, վարչական ակտ կկայացնի մի հարցի վերաբերյալ, որի պարզման հարցը, ՀՀ Սահմանադրության համաձայն, վերապահված է բացառապես Սահմանադրական դատարանին: Ավելին, Հանձնաժողովի եզրակացության բողոքարկման դեպքում վարչական դատարանը ևս քննարկման առարկա կդարձնի Սահմանադրական դատարանի կողմից գնահատման ենթակա հարցը:

Այս առումով հարկ է նկատել, որ այն դեպքերում, երբ անհամատեղելիության պահանջների խախտման առկայության վերաբերյալ Հանձնաժողովի եզրակացությունը

պետք է դառնա այլ դատական ատյանի քննության առարկա, «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսվել է, որ Հանձնաժողովի եզրակացությունները բողոքարկման ենթակա չեն: Նման կարգավորում է նախատեսվել, մասնավորապես, պատգամավորների, դատավորների և Բարձրագույն դատական խորհրդի ոչ դատավոր անդամների կողմից անհամատեղելիության պահանջների խախտումների մասին Հանձնաժողովի եզրակացությունների առնչությամբ:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը որոշում է կայացնում պատգամավորի լիազորությունները դադարեցնելու հարցի վերաբերյալ:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 86-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունները դադարեցվելու դեպքում Բարձրագույն դատական խորհուրդը կայացնում է որոշում: Սահմանադրական օրենքի 89-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհուրդը լուծում է դատավորի լիազորությունների դադարեցման հարցը:

Այսպիսով, պատգամավորների լիազորությունների դադարեցման հարցը ենթակա է Սահմանադրական դատարանի քննարկմանը, իսկ Բարձրագույն դատական խորհրդի անդամների և դատավորների լիազորությունների դադարեցման հարցը՝ Բարձրագույն դատական խորհրդի քննարկմանը:

Հանձնաժողովն արձանագրում է, որ «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներն ուղղված են այնպիսի իրավիճակի բացառմանը, երբ Սահմանադրական դատարանի կամ Բարձրագույն դատական խորհրդի կողմից քննարկման ենթակա հարցին վերաբերելի՝ Հանձնաժողովի եզրակացությունը կբողոքարկվի և քննարկման առարկա կդառնա վարչական դատարանում: Ընդ որում, այն հանգամանքը, որ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով չի նախատեսվել համանման կարգավորում Հանրապետության նախագահի պարագայում, վկայում է այն մասին, որ օրենսդիրը նպատակ չի ունեցել ամրագրելու Հանձնաժողովի լիազորությունը՝ քննարկելու

Հանրապետության նախագահի կողմից անհամատեղելիության պահանջների խախտման հարցը:

Վերոգրյալի համատեքստում Հանձնաժողովը կրկին ընդգծում է, որ պայմանավորված Հանրապետության նախագահի սահմանադրական հատուկ կարգավիճակով՝ Սահմանադրությամբ նախատեսվել է նրա պաշտոնանկության բարդեցված ընթացակարգ, որը ենթադրում է **միայն Սահմանադրական դատարանի կողմից պաշտոնանկության հիմքերի առկայությունը գնահատելու հնարավորությունը:** Անհամատեղելիության պահանջների խախտման հարցի գնահատումը ևս ներառվում է Սահմանադրական դատարանի նշված լիազորության շրջանակներում, քանի որ այն ևս ուղղված է պաշտոնանկության հիմքերի առկայության պարզմանը:

Ըստ այդմ, չնայած «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով չեն նախատեսվել բացառություններ՝ կապված անհամատեղելիության պահանջների խախտման վարույթի սուբյեկտային կազմի հետ, Հանձնաժողովը գտնում է, որ Հանրապետության նախագահի կողմից անհամատեղելիության պահանջների ենթադրյալ խախտման հանգամանքի քննարկումն իր իրավասություններից դուրս է, քանի որ այս հարցի քննարկումը վերապահված է բացառապես Սահմանադրական դատարանին:

Հանձնաժողովն ընդգծում է, որ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում սուբյեկտային կազմի հետ կապված բացառությունների բացակայությունը չի կարող մեկնաբանվել այնպես, որ Հանձնաժողովն իրավասու է քննելու պետական պաշտոն զբաղեցնող բոլոր անձանց կողմից անհամատեղելիության պահանջների խախտման հարցը:

Ասվածը հիմնավորվում է նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի նորմերի վերլուծությամբ: Այսպես, սահմանադրական օրենքի 153.1-րդ հոդվածով սահմանվում է ինքնավար մարմինների անդամների լիազորությունների դադարեցման կարգը՝

*«1. Ազգային ժողովի նշանակած **ինքնավար մարմնի անդամի լիազորություններն** օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում **կարող են դադարեցվել այդ***

ինքնավար մարմնի եզրակացության հիման վրա՝ *սույն հոդվածով սահմանված կարգով:*

2. Եզրակացությունն օրենքով սահմանված կարգով ստանալուց հետո՝ 24 ժամվա ընթացքում, Ազգային ժողովի նախագահն ապահովում է դրա տրամադրումը պատգամավորներին, իսկ ինքնավար մարմնի անդամի լիազորությունների դադարեցման մասին հարցը քննարկվում է Ազգային ժողովի առաջիկա հերթական նիստերում:

(...)

4. Ինքնավար մարմնի անդամի լիազորությունների դադարեցման մասին հարցն Ազգային ժողովի նիստում քննարկվում է Կանոնակարգի 149-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով, հետևյալ տարբերությամբ՝ ***որպես հիմնական զեկուցող հանդես է գալիս ինքնավար մարմնի նախագահը*** *կամ օրենքով սահմանված կարգով նրան փոխարինողը, որից հետո ելույթ կարող է ունենալ և հարցերին պատասխանել եզրակացությունում նշված ինքնավար մարմնի անդամը:*

5. Հարցի քննարկման ավարտին քվեարկության է դրվում ինքնավար մարմնի եզրակացության հիման վրա՝ ինքնավար մարմնի անդամի լիազորությունների դադարեցման մասին հարցը: (...)»:

Այսպիսով, «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի համաձայն՝ ինքնավար մարմնի անդամի լիազորությունների դադարեցման հարցն Ազգային ժողովի կողմից կարող է քննարկվել այդ ինքնավար մարմնի եզրակացության հիման վրա: Ընդ որում, նման դեպքում Ազգային ժողովի նիստում որպես հիմնական զեկուցող է հանդես գալիս ինքնավար մարմնի նախագահը: Ինքնավար մարմնի անդամի լիազորությունների դադարեցման ընթացակարգը կանոնակարգող դրույթները կառուցված են նույն տրամաբանությամբ, ինչ պատգամավորի կամ անկախ մարմինների անդամների լիազորությունների դադարեցման ընթացակարգը՝ այն տարբերությամբ, որ առաջին դեպքում լիազորությունների դադարեցման հարցի քննարկման հիմքն ինքնավար մարմնի եզրակացությունն է, երկրորդ դեպքում՝ Հանձնաժողովի:

Վերոգրյալից բխում է, որ ինքնավար մարմինների անդամների պարագայում անհամատեղելիության պահանջի խախտման առկայությունը քննարկելու իրավասու մարմինը հենց տվյալ ինքնավար մարմինն է, քանի որ վերջինիս եզրակացության հիման

վրա է, որ կարող է քննարկվել տվյալ պաշտոնատար անձի լիազորությունների դադարեցման հարցը:

Ըստ այդմ, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում բացառությունների բացակայությունը չի բխում «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով սահմանվող՝ Ազգային ժողովի կողմից Հանրապետության նախագահի և ինքնավար մարմինների անդամների լիազորությունների դադարեցումը կարգավորող իրավադրույթների ընդհանուր տրամաբանությունից և հակասում է դրան: Նմանապես, «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքում Հանրապետության նախագահի առնչությամբ բացառության բացակայությունը համահունչ չէ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի կարգավորումներին, որոնցով ամրագրվում է Սահմանադրական դատարանի լիազորությունը՝ քննելու Հանրապետության նախագահի կողմից Սահմանադրության կոպիտ խախտման վերաբերյալ գործերը: Ըստ այդմ, տվյալ պարագայում կիրառելի են «Ազգային ժողովի կանոնակարգ» և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքների՝ որպես ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերի դրույթները: Ավելին, Հանձնաժողովը գտնում է, որ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 153.1-րդ հոդվածի դրույթները ծառայում են որպես հատուկ նորմ՝ սահմանելով անհամատեղելիության պահանջների խախտման հարցի քննարկման տարբերվող, առանձնահատուկ ընթացակարգ՝ ի համեմատություն «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով նախատեսված ընդհանուր նորմի (հոդվածներ 27, 33):

Վերոգրյալից ելնելով՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ իրավասու չէ քննարկելու Հանրապետության նախագահի կողմից անհամատեղելիության պահանջների հնարավոր խախտման հանգամանքը և այս առնչությամբ հարուցելու վարույթ:

Ինչ վերաբերում է հայտարարագրման պահանջների առերևույթ խախտման առնչությամբ դիմումում ներկայացված պահանջին՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասը հստակ սահմանում է, որ Հանձնաժողովն իրականացնում է **հայտարարագրերի**

վերլուծության համար նշանակություն ունեցող հանգամանքներ պարունակող լրատվամիջոցների հրապարակումների կամ **անձանց գրավոր դիմումների հիման վրա հայտարարագրերի վերլուծություն**: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմումատուի կողմից ներկայացվել են Հանրապետության նախագահի հայտարարագրերում առերևույթ ոչ ամբողջական տվյալներ ներկայացնելու վերաբերյալ տեղեկություններ՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ առկա են օրենքով նախատեսված հիմքեր Հանրապետության նախագահի հայտարարագրերի վերլուծության իրականացման համար:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 13-րդ մասով, 25-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 4-րդ մասով՝ Հանձնաժողովը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ քաղաքացի Էդգար Ղազարյանի կողմից 2024 թվականի օգոստոսի 29-ին ներկայացված դիմումի հիման վրա անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ վարույթի հարուցումը մերժել:
2. Իրականացնել Վահագն Խաչատուրյանի կողմից ներկայացված 2022 և 2023 թվականների հայտարարագրերի վերլուծություն:
3. Սույն որոշումը եռօրյա ժամկետում ուղարկել Էդգար Ղազարյանին:
4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԱՐՈՂ՝ **ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ**